# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-258-Ն օրենքի (այսուհետև Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) «ժ)» կետում «արտադրանքի թողարկման» բառերից հետո ավելացնել հետևյալ « **(ներառյալ դեղերի և բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման)**» բառերով,

2) «ժե)» կետից հետո լրացնել «ժզ)» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ժզ) **բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) փոխադրում ռազմական դրության աշխատանքային ռեժիմի:»**

**Հոդված 2.** Օրենքի 9-րդ հոդվածի՝

1) 1-ին և 2-րդ մասերում «արդարադատության» բառից հետո լրացնել «**առողջապահության»** բառը,

2**)** 2-րդ մասը «զ)» կետից հետո լրացնել «է)» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

**«է) ռազմական դրության պայմաններում բնակչության բժշկական օգնության և սպասարկման ապահովում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում բնակչության բնական կենսագոյության ապահովման համար լրացուցիչ ուժերի և միջոցների ծավալման վերաբերյալ առաջադրանքների տրամադրում:»**

**Հոդված 3.** Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը «14)» կետից հետո լրացնել «15)» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

**«15) սահմանում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման իրականացման կարգը»**

**Հոդված 4.** Օրենքի 12-րդ հոդվածը «դ)» կետից հետո լրացնել «ե)» կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

**«ե) ռազմական դրությամբ պայմանավորված առողջապահության բնագավառի կառավարման լիազորություններն անցնում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին՝ անկախ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների սեփականության ձևից»:**

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: